

Մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց համայնքներ եւ հանդիպեց բնակիչների հետ

Օգոստոսի 26-ին մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց մի շարք համայնքներ եւ ծանոթացավ ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման հրատապ ծրագրի ընթացիկ աշխատանքներին:

Մարզպետը նախ եղավ Աշտարակի Պոռշյան 10 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքում, որտեղ իրականացվում է տանիքի վերանորոգման ծրագիր: Այնուհետեւ նա այցելեց Կարբի եւ Ուշի համայնքներ: Լինելով տեղերում, մարզպետը տեղեկացավ, որ նախատեսված շինարարական աշխատանքներն ընթանում են սահմանված ժամանակացույցով: Նա առանձնակի կարեւորեց, որպեսզի ապահովվեն դրանց կատարողական ժամկետներն ու որակը:

Այցելելով համայնքներ, Սարգիս Սահակյանը հանդիպեց նաեւ բնակիչների հետ: Վերջինները մարզի ղեկավարին ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը, որոնք վերաբերում էին ինչպես հանրային խնդիրներին, այնպես էլ անձնական բնույթի էին: Բոլոր հարցերին մարզպետը տվեց անհրաժեշտ պարզաբանումներ եւ դրանց լուծման հանձնարարականներ: